«ՍԵՎԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Միջառարկայական կապերը հայոց լեզվի և գրականության դասաժամերին
Առարկա՝	Հայոց լեզու և գրականություն
Հեղինակ՝	Լիանա Մելքումյան
Ուսումնական հաստատություն՝	Վահանի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

ԳԼՈՒԽ 1 ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ..... 6

1.1 Հայոց լեզու և գրականություն..... 7

1.2 Հայոց լեզու և գիտություններ..... 8

ԳԼՈՒԽ 2 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ..... 11

2.1 Գրականություն և պատմություն..... 11

2.2 Գրականություն և հայոց եկեղեցու պատմություն..... 13

2.3 Գրականություն և մաթեմատիկա..... 14

2.4 Գրականություն և արվեստ..... 21

2.5 Գրականություն և բնագիտություն..... 24

2.6 Գրականություն և աշխարհագրություն..... 25

2.7 Գրականություն և ժամանակակից տեխնոլոգիաներ..... 26

Եզրակացություն..... 27

Օգտագործված գրականության ցանկ..... 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգում կարևորը առարկայական ուսուցումը խորացնելն է, թ՞ե միջառարկայական կապերի կիրառման միջոցով գիտելիքների ինտեգրումը: Այս 2 հարցադրումները, ըստ էության, ոչ թե հակադրվում, այլ լրացնում են միմյանց: Հետևաբար, հենվելով առարկայական ուսուցման վրա, անհրաժեշտ է ինտեգրել ուսուցման գործընթացները, ամրապնդել տարբեր առարկաների միջև փոխադարձ կապը:

Դպրոցական դասընթացում աշակերտների կրթական և դաստիարակչական մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ արդյունավետ ուղիների ընտրությունը գտնվում է բոլոր ուսուցիչների ուշադրության կենտրոնում: Տարբեր մեթոդներ գործադրելով՝ ուսուցիչը պետք է բարձրացնի աշակերտի գործունեությունը դասերին, ոգևորի բոլոր աշակերտներին: Նա պետք է տրամաբանելու և ստեղծագործելու հնարավորություն տա:

Դպրոցում կրթությունն ուղղված է անձի համակողմանի և ներդաշնակ զարգացմանն ու դաստիարակմանը: Դրա իրականացման գործում առկա են բազմաթիվ միջոցներ և մեթոդներ, որոնցում էական են միջառարկայական կապերի ստեղծումը:

Մանկավարժական գրականության մեջ գոյություն ունեն միջառարկայական կապի ավելի քան 30 ձևավորված սահմանումներ:

Ըստ Ի. Դ. Զվերևի և Վ. Ն. Մակսիմովի «Կրթության ժամանակակից գործընթացների զարգացման և ճանաչողական գործունեության իրականացման գործում ամենակարևոր գործոնը միջառարկայական կապն է: Այն ցուցաբերում է բազմակողմանի ազդեցություն կրթական գործընթացների վրա»: Ջ. Լոկը կարծում է, որ ուսումնական գործընթացում մի առարկան պետք է հարստացվի մյուս առարկաների տարրերով: Պրոգրեսիվ մանկավարժները՝ Յ. Ա. Կոմենսկին, Կ. Դ. Ուշինսկին, Ն. Կ. Կրուպսկայան ընդգծում էին ուսումնական առարկաների միջև միջառարկայական կապերի անհրաժեշտությունը՝ համարելով արդյունավետ ուսուցման կարևորագույն նախապայմաններից մեկը՝ բնության մասին գիտական և ամբողջական պատկերի, իրական գիտելիքների և ճիշտ աշխարհընկալման ձևավորման գործում:

Ի. Հ. Պեստալոցին լուրջ վտանգ էր տեսնում առարկաները «տարանջատելու» մեջ: Նրանք, ճանաչողական առումով, միջառարկայական կապերի իրականացումը համարում էին ուսուցման բարելավման կարևոր միջոց:

Մանկավարժագետներին հետաքրքրել է նաև միջառարկայական կապի դասակարգման հարցը, որը մինչև այսօր չունի հստակ մոտեցում: Միջառարկայական կապերը դասակարգելիս հիմք են ընդունել ժամանակային գործոնը:

Ըստ այդ գործոնի կապերը բաժանվում են մի քանի խմբի[1].

1. **Ուղեկցվող կամ հորիզոնական կապեր**

Այն կապերն են, որոնք գործադրվում են ուսումնական տարվա համեմատաբար կարճ, բայց հաջորդական ժամանակաշրջաններում (քառորդ, կիսամյակ) երկու առարկաների տեղեկատվական նյութեր ուսումնասիրելիս:

2. **Նախորդող կամ ուղղահայաց կապեր**

Այն կապերն են, որոնք պայմանավորված են երկու առարկաների համաժամանակյա տեղեկատվական նյութերով:

3. **Հեռանկարային կապեր**

Այն կապերն են, որոնք պայմանավորված են մի քանի առարկաների տեղեկատվական նյութերով, որ գործում է ավելի երկար ժամանակ՝ 1-3 տարի:

Այս կապերի օգտագործումը հնարավորություն է տալիս առարկայի կամ երևույթի, անձի և իրադրության մասին տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքներն ու տեղեկությունները միավորել մեկ ընդհանուր համակարգի մեջ: Դա օգնում է բացատրվող նյութի ճիշտ և խոր յուրացմանը, անցածի և անցնելիքի միջև տրամաբանական կապերի ստեղծմանը, ձեռք բերած գիտելիքների և կարողությունների փոխանցմանն ու օգտագործմանը, որը հսկայական զարգացնող արժեք ունի աշակերտների համար:

Այս կապերն ունեն իրենց որոշակի տեղը ուսումնական աշխատանքի, նույնիսկ առանձին նյութի ուսումնասիրության ընթացքում: Նայած անհրաժեշտությանն ու նյութի բնույթին՝ միջառարկայական կապերը կարող են օգտագործվել դասի ընթացքում կամ նյութի ուսումնասիրության 3 պահերին՝

- *ուսումնասիրվող նյութի շուրջ անցկացվող զրույցի ժամանակ*՝ նոր նյութի մասին պատկերացում տալու համար,
- *նյութի մշակման ժամանակ*, երբ աշակերտների ընթերցած այս կամ այն հատվածի շուրջ որոշակի բացատրություններ են տրվում ուսուցչի և աշակերտների կողմից: Փաստեր են բերվում անցած նյութերից, համեմատություններ, հակադրություններ, զուգահեռներ՝ միտքը ավելի պարզ, մատչելի դարձնելու համար: Այսպիսի լրացուցիչ փաստարկումներ պետք է

[1] Հայոց լեզու և գրականություն, 2005թ., թիվ 3-4, էջ 82

պահանջել նաև պատասխանելու ժամանակ՝ նյութը խոր յուրացնելու և ինքնուրույն եզրահանգումներ կատարելու համար,

- *ամփոփման ժամանակ* օգտագործվում են միջառարկայական կապեր: Այս դեպքում աշակերտները ավելի ազատ են արտահայտվում, այսինքն՝ ոչ թե կոնկրետ նյութի մասին է խոսվում, այլ՝ ընդհանուրի:

Միջառարկայական կապերը համարվում են ուսումնական գործընթացի դիդակտիկական պայման և միջոց, հետապնդում են նպատակ և խնդիրներ, պարունակում են մեթոդներ, միջոցներ և ձևեր՝ գիտության խորը և բազմակողմանի ուսումնասիրման, գիտելիքների խորացման, գիտական հասկացությունների և օրենքների ձևավորման, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման, գիտական աշխարհայացքի ձևավորման, տրամաբանական մտածողության զարգացման համար:

Ուսումնական գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը կարող է ապահովվել հետևյալ միջոցներով.

- հարցերի շարադրում
- առանձին առաջադրանքների հանձնարարում
- պրոբլեմային իրավիճակների ստեղծում
- ճանաչողական առաջադրանքների կատարում
- փորձարարական և հետազոտական բնույթի վարժությունների լուծում

Սրանցից յուրաքանչյուրը դոմինանտ դեր ունի ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում:

ԳԼՈՒԽ 1 ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԵՐԸ ԵՎ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

Լեզուն մարդկային հաղորդակցման հիմնական, ամենակարևոր միջոցն է: Այն օգնում է բառերի և նախադասությունների ճիշտ համակցումով արտահայտել մտքերը, գաղափարները, զգացմունքներն ու հույզերը:

Լեզուն ոչ միայն դպրոցում դասավանդվող առարկաներից մեկն է, այլև մյուս բոլոր առարկաները սովորելու միջոց, գիտությունների գաղտնիքների բանալին է:

Հայոց լեզուն իր մեջ ամփոփում է բոլոր աշխարհաճանաչողական տեղեկություններն ու գիտելիքները և դրանց փոխանցման հիմնական միջոցն է: Մեծ է միջառարկայական կապերի օգտագործման դերը աշակերտների աշխարհայացքի, մտածողության և աշխարհընկալման գործում: Հայոց լեզվի միջոցով աշակերտները ոչ միայն գրել, կարդալ, խոսել են սովորում, այլև ստանում են աշխարհաճանաչողական տեղեկություններ: Հայոց լեզվի միջոցով աշակերտը կապ է ստեղծում գրականության, արվեստի տարբեր ձևերի, տարբեր գիտությունների հետ՝ նպաստելով դասաժամի լիարժեքության բարձրացմանն ու աշակերտների համակողմանի զարգացմանը:

Լեզվի ուսուցումը ենթադրում է ոչ միայն լեզվական կանոնների յուրացում, այլև բառապաշարի հաստատում, ճիշտ և գրագետ խոսք կառուցելու հմտությունների մշակում ու զարգացում:



1.1 Հայոց լեզու և գրականություն

Միջառարկայական կապերի ապահովումը առավել ցայտուն կերպով դրսևորվում է հայոց լեզվի և գրականության ուսուցման ընթացքում: Այն ամենից առաջ ենթադրում է հետևյալը.

- մի կողմից լեզվի դասերին լեզվական երևույթները, հասկացությունները բացատրելու համար օգտվել անցած գրական երկերի ընձեռած հնարավորություններից, լեզվական նյութը բացատրել աշակերտին արդեն ծանոթ գրական երկերի օրինակների, կենդանի խոսքի վրա,
- մյուս կողմից գրականության դասերին անհրաժեշտության դեպքում հատուկ ուշադրություն դարձնել լեզվական այն հարցերին, որոնք աշակերտներն արդեն սովորել են կամ սովորում են լեզվի դասերին:

Լեզվի և գրականության միջառարկայական կապն ունի երկկողմանի բնույթ՝ լեզու-գրականություն և գրականություն-լեզու:

Գրականության դասերից անբաժան պետք է լինի հատկապես ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը: Հայտնի է, որ լեզվի դպրոցական դասագրքում թվարկված են ուղղագրական ու ուղղախոսական կանոնները և դրանց վերաբերյալ բառերի համապատասխան ցանկեր: Հայտնի է նաև, որ աշակերտները դասը պատասխանելիս կամ բառերն առանձին թվարկելիս սովորաբար ճիշտ են արտասանում, սակայն կապակցված խոսքում, այլ բառերի հարևանությամբ թույլ են տալիս բազմաթիվ սխալներ, ճիշտ չեն արտասանում: Ճիշտ կլինի գեղարվեստական երկն անցնելիս ուսուցիչը պահանջի դուրս գրել ուղղագրական դժվարություն ունեցող բառերը, սովորել դրանք գործածել նախադասության մեջ, ապա աչքի ընկնող չափով կպակասեն ուղղագրական սխալները:

Ընթերցանության ժամանակ, հատկապես չափածո երկերի, լուրջ ուշադրություն պետք է դարձնել լեզվից սովորած այնպիսի մի նյութի, ինչպիսին հայերենի շեշտն է:

Գրականության դասերին սերտորեն պետք է անցնել բառագիտությունը, պարզապես բառագիտության ուսուցումն անհնար է արդյունավետ կազմակերպել առանց գրականության դասերի: Այստեղ է, որ աշակերտը պետք է սովորի բառի իմաստը, բազմիմաստությունը, ուղղակի և փոխաբերական իմաստը, նորարարություններն ու հնաբանությունները, սովորի տարբերակել գրական ու բարբառային բառերը, դարձվածքները, զգա հոմանիշների արտահայտչական

արժեքը: Բազմաբնույթ աշխատանքների շնորհիվ զարգանում է նաև աշակերտների պատկերավոր մտածողությունը:

Գրականության դասերին ուսուցիչը պետք է բավարարվի ոչ միայն բառի իմաստը տվյալ գործածության մեջ բացատրելով, այլև անդրադառնա այլ իմաստների, տարբեր իմաստներով գործածել տա նախադասության մեջ: Միայն այդ կերպ է հնարավոր հարստացնել բառապաշարը, անծանոթ բառերը դարձնել աշակերտի սեփականությունը, բառերին կենդանություն տալ:

Չպետք է մտածել, թե լեզվի և գրականության միջառարկայական կապի ապահովումը նշանակում է գրականության դասի վերածում լեզվի դասի: Ո՛չ, գրականության դասն ունի իր խնդիրները, լեզվի դասն ունի իրենը:

Լեզվի ժամերին բարդ նախադասություն անցնելիս շատ տեղին է գրական տեքստերից առանձնացնել, բերել օրինակներ, պարզել նրանց կառուցվածքը, կապակցության միջոցները, բարդ նախադասության կապի մեջ մտնող նախադասությունների կապն ու փոխհարաբերությունը: Նպատակահարմար է տնային աշխատանքներն էլ հանձնարարել գեղարվեստական գրականությունից կամ գրականության դասագրքից:

Առանց գրական տեքստի, առանց գրականության դասերի դժվար կլինի ուսուցանել ուղղակի խոսքի փոխակերպումը անուղղակիի կամ հակառակը: Դժվար է նաև ուսուցանել հայերենի կետադրությունը: Արտահայտիչ ընթերցանության, արտասանության, ուղղախոսության համար անհրաժեշտ է կետադրական կանոնների իմացություն:

Լեզվի բոլոր բաժինների ուսուցման ժամանակ հենվում ենք գրական օրինակների, նախադասությունների վրա և գրականության նյութն ուսումնասիրելիս օգտվում ենք լեզվական կանոնների ամբողջությունից:

1.2 Հայոց լեզու և գիտություններ

Մարդը խոսում է այնպես, ինչպես մտածում է կամ այն բառը, արտահայտությունը ճիշտ, տեղին չի գործածվում, տուժում է միտքը: Հետևաբար շատ կարևոր է կարողանալ մտքի և արտահայտության միջև ուղիղ ու ներդաշնակ կապ ստեղծել: Երբեմն էլ աշակերտները մտքերը ձևակերպելիս ճիշտ չեն կազմում համաձայնությունը նախադասության անդամների միջև, ճիշտ չեն գործածում կետադրական նշանները, որից փոխվում է նախադասության ամբողջ իմաստը:

Որպեսզի ուսումնական նյութն աշակերտը ճիշտ ներկայացնի, պետք է կարողանա տարբերակել բառերի արմատները, ածանցները, հոդակապերը, ծանոթ լինի հոմանիշներին, բարդ նախադասություններ կազմելու կանոններին, կետադրական նշանների գործածության սկզբունքներին և այլն:

Հայոց լեզվի դասաժամերին գործածվում են աշխարհագրական, պատմական անվանումներ, իրողություններ: Աշակերտները օգտվում են քարտեզից, թվարկում և ցույց տալիս պետություններ, օվկիանոսներ, մայրցամաքներ, բնութագրում տեսարժան վայրեր, ներկայացնում պատմական դեպքեր, իրադարձություններ:

Տարբեր եղանակների բայաձևերով կազմում են բնագիտական, հասարակագիտական ոլորտի տեքստեր, հոմանիշ-հականիշ բառաշարքեր թարգմանում, այդ բառերի օգնությամբ նկարագրում արվեստի գործեր (քանդակ, ճարտարապետական կառույց), փոխանցում հույզեր:

Լեզուն դրսևորվում է նաև կինոյում, թատրոնում և արվեստի մյուս տեսակներում:

Հայոց լեզվին վերաբերող տեղեկություններ աշակերտները ձեռք են բերում հանրագիտարանների, բառարանների և համակարգչի միջոցով:

Պատմության, հանրահաշվի, բնագիտության հետ կապ են ստեղծում թվականները, ուստի շատ կարևոր է իմանալ թվականների գրությունն ու արտասանությունը:

Հայոց այբուբենի յուրաքանչյուր տառ ունի իր հերթական համարը, անվանումը, թվային և թվային կարգի արժեքները:

Աա – այբ - 1	Ժժ – ժե - 10	Ճճ – ճե - 100	Ռռ – ռա - 1000
Բբ – բեն - 2	Իի – ինի - 20	Մմ – մեն - 200	Սս – սե - 2000
Գգ – գիմ - 3	Լլ – լյուն - 30	Յյ – հի - 300	Վվ – վեվ - 3000
Դդ – դա - 4	Խխ – խե - 40	Նն – նու - 400	Տտ – տյուն - 4000
Եե – եչ - 5	Ծծ – ծա - 50	Շշ – շա - 500	Ռր – ռե - 5000
Զզ – զա - 6	Կկ – կեն - 60	Ոո – վո - 600	Ցց – ցո - 6000
Էէ – է - 7	Հհ – հո - 70	Չչ – չա - 700	Իւ – վյուն - 7000
Ըը – ըթ - 8	Ձձ – ձա - 80	Պպ – պե - 800	Փփ – փյուր - 8000
Թթ – թո - 9	Ղղ – ղատ - 90	Ջջ – ջե - 900	Քք – քե - 9000

Եվ-ը ավելացել է հետագայում

Օօ-ն ավելացել է միջին դարերում, զուրկ է թվային արժեքից

Ֆֆ – ֆե –ն ավելացել է միջին դարերում, զուրկ է թվային արժեքից

Ա – Թ	1 - 9	**միավորներ**
Ժ – Ղ	10 - 90	**տասնավորներ**
Ճ – Ջ	100 - 900	**հարյուրավորներ**
Ռ – Ք	1000 - 9000	**հազարավորներ**
10 000 –ը կոչվել է բյուր		

ԳԼՈՒԽ 2 ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ

«Կյանքը պետք է լցված լինի գրքերով, որոնք լի են կյանքով»:

Մարկով

2.1 Գրականություն և պատմություն

Միջառարկայական կապերի տեսակներից է գրականություն և պատմություն կապը, որը նպաստում է պատմական նյութի խորքային իմացությանը, դասը դարձնում բովանդակալից և հետաքրքիր:

Շնորհիվ այս կապի՝ զուգահեռներ են ստեղծվում երկու տարբեր առարկաների միջև հետևյալ նյութերի ուսուցման ժամանակ. [2]

❖ *Պատմավեպերի ուսուցման ժամանակ*

Յուրաքանչյուր պատմավեպի ուսուցման ժամանակ ուսուցիչը նախ պետք է բացատրի պատմավեպի հիմքում ընկած պատմական ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական իրավիճակը, պատմական միջավայրի առանձնահատկությունները: Այնուհետև նշելով պատմական այն սկզբնաաղբյուրները, որից օգտվել է հեղինակը, ուսուցիչը պետք է բացատրի, որ

[2] Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, էջ 85

պատմավեպ գրելիս գրողը, ինչպես նշում է Մուրացանը, չպետք է դառնա պատմական փաստերի պատճենահանողը: Գրողը, հենվելով պատմիչների արձանագրած պատմական փաստերի վրա, պետք է ստեղծագործական երևակայության արդյունքում ստեղծի գեղարվեստական ստեղծագործություն, որտեղ կարող են առկա լինել սյուժետային այնպիսի դրվագներ, որոնք չկան պատմական վկայություններում: Պատմական հերոսները, թրծվելով գրողի գեղարվեստական երևակայությամբ, դառնում են ավելի ընդգծված գեղարվեստական կերպարներ՝ հուզառատ ներաշխարհ, հոգեբանական դժվար ապրումներ, աշխարհայացք… Ուսուցիչը պետք է բացատրի նաև, որ հեղինակի ապրած ժամանակաշրջանը, աշխարհընկալումը, մտածողությունը ինչ-որ չափով արդիական շունչ են տալիս, հնչեցնում պատմական այդ ժամանահատվածում կարևոր խնդիրներ:

❖ *<u>Կենսագրական նյութի ուսուցման ժամանակ</u>*

Միջառարկայական կապ կարելի է ստեղծել նաև հեղինակի կենսագրական նյութի ուսուցման ժամանակ: Գրողի աշխարհայացքի, մտածողության, արժեհամակարգի վրա խորը հետք են թողնում պատմական իրադարձությունները, բեկումնային իրողությունները: Պատմական միջավայրից և ժամանակաշրջանից էլ զարգանում է հեղինակի ստեղծագործական միտքը: Օրինակ՝ Ն. Զարյանի «Երկու հանճարեղ գլուխ» բանաստեղծության վերլուծության ժամանակ աշակերտը կընկալի բանաստեղծության ենթաշերտում զետեղված գաղափարական հարցադրումները, եթե կենսագրական նյութի ուսուցման ժամանակ ուսուցիչը նրանց բացատրած լինի Զարյանի մտածողության մեջ կատարված որակական փոփոխությունների մասին՝ պայմանավորված ստալինյան բռնատիրական օրենքներով:

❖ *<u>Ինքնակենսագրական նյութի ուսուցման ժամանակ</u>*

Ինքնակենսագրական վեպերի միջոցով հեղինակը ներկայացնում է իր ապրած ժամանակաշրջանի պատմական նկարագիրը: Գիտակցում է, որ իր կյանքի պատմությունը հետագա սերունդների համար դառնալու է պատմական այդ ժամանակաշրջանի ճանաչողության և արժևորման հնարավորություն: Ուսուցիչը գրականություն-պատմություն կապի օգնությամբ պետք է համադրի տվյալ հեղինակի ապրած ժամանակաշրջանի պատմական իրողությունը, նկարագիրը: Օրինակ՝ Գ. Մահարու «Ծաղկած փշալարեր» ինքնակենսագրական վեպի ուսուցման ընթացքում աշակերտը լրիվ պատկերացում է կազմում ստալինյան բռնապետական տարիների մասին:

- *Այնպիսի ստեղծագործությունների ուսուցման ժամանակ, որոնց գրական երկունքը կրում է այդ օրերի, պատմական այդ ժամանակաշրջանի կնիքը*

Օրինակ՝ Չարենցի, Բակունցի, Մահարու և այն հեղինակների, ովքեր ապրեցին «Անհատի պաշտամունքի» տարիներին, ստեղծագործությունների վրա մեծ է ժամանակաշրջանի պատմական ազդեցությունը: Ուսուցիչը պետք է նշի, որ պատմական այդ բարդ ժամանակաշրջանում, երբ իշխում էին ստալինյան դաժան օրենքները, վտանգված էին ազգային մտածողությունն ու արժեքները, արգելված թեմաների շարքում էր նաև դարասկզբի ողբերգության թեման, իսկ դա նշանակում էր պատմական հիշողության կորուստ: Չմոռանալով անցյալը՝ Բակունցը առաջինը ստեղծագործական խիզախումով անդրադարձավ արևմտահայության ճակատագրին՝ հիմնելով այս թեմայի կենարար ակունքը: Ընդգծելով արևմտահայության ճակատագրի թեման, դարասկզբի Մեծ եղեռնի դառնություններն ու կորուստները՝ դասը դառնում է ավելի արդյունավետ և բովանդակալից:

Միջառարկայական կապերի նման հետաքրքիր մոտեցումները հնարավորություն կտան դասը դարձնելու արդյունավետ և բովանդակալից: Այս կապի օգնությամբ աշակերտները ճիշտ կընկալեն գեղարվեստական երկում պատմականի և գեղարվեստականի հեղինակային խաչաձևումները:

2.2 Գրականություն և հայոց եկեղեցու պատմություն

Հայ եկեղեցու պատմությունը իր արտացոլումն է գտել նաև հայ գրականության մեջ: Հարյուրամյակներով չենք ունեցել պետականություն, եկեղեցին է ստանձնել այդ դերը, նաև մշակույթ է զարգացել եկեղեցում՝ Մաշտոցից մինչև ձեռագրատներ, երաժշտություն:

Աստծուն նվիրված աղոթք է հայոց այբուբենը:

Արարիչ	Ժամանակաց	Ճեմարան	Ռաբբի
Բովանդակ	Իրաց	Մտաց	Սրբոց
Գոյութեանց	Լուսոյ	Յիսուս	Վկայարան
Դուռ	Խավարի	Նազովրեցի	Տէր
Երկնի	Ծովուց	Շնորհ	ՄԷՐ
Զօրաւոր	Կենսականաց	Ոգեշունչ	Ցանկալի
Էութիւն	Համայնից	Չարեաց	ՈՒ

Ըստհուն	Ձայն	Պատաղիչ	Փառք
Թագաւոր	Ղօղանջանաց	Ջանադիր	Քրիստոսիդ

Այս Աղոթք-այբուբենում Աստծո անունը կրկնվում է 7 անգամ՝ 1.Արարիչ, 2.Դուռ երկնի, 3.Զորավոր էություն, 4.Թագավոր ժամանակաց, 5.Յիսուս Նազովրեցի, 6.Տեր, 7.Քրիստոս:

«Աստվածաշնչի» թարգմանությունն էլ մեծ դեր է խաղացել մեր ժողովրդի հոգեբանության ու մշակույթի վրա, համարվել է «թարգմանությունների թագուհի»:

Պատմիչներն իրենց ստեղծագործությունների միջոցով տեղեկություններ են հայտնել հայ ժողովրդի պատմության կարևոր իրադարձությունների մասին՝ քրիստոնեության տարածում և հռչակում, Գրիգոր Լուսավորչի տեսիլ, Հռիփսիմյաց կույսերի պատմություններ, Մայր տաճարի հիմնադրում, աստվածասեր և արծաթասեր հոգևորականների, հանուն հավատի պայքարողների և նահատակվողների կյանքի պատմություններ ...

Եկեղեցին մեծ տեղ է գրավել նաև սրբերի դասին դասված Գ. Նարեկացու կյանքում: Նրա տաղերը, գանձերը արտահայտում են կրոնական գաղափարներ, իսկ «Մատյան ողբերգությանը»՝ «Նարեկը», սրտի խոսք է Աստծու հետ:

Ն. Շնորհալին էլ «Առաւօտ լուսոյ» շարականը գրել է բերդապահ զինվորների համար, որ գիշերներն արտասանեն, սպասեն արշալույսին, նաև այբուբենը անգիր սովորեն:

Եկեղեցուն նվիրված պատմությունների ու միջադեպերի միջոցով հայ երեխան ճանաչում է իր ազգի հոգևոր էությունը, ինքնությունը, պատմությունը, վարդապետությունը, աստվածապաշտությունը:

2.3.Գրականություն և մաթեմատիկա

«Բնության ոսկե գիրքը գրված է մաթեմատիկայի լեզվով: Եվ որպեսզի կարդանք այդ գիրքը, պետք է իմանանք մաթեմատիկայի լեզուն»:

Գ. Գալիլեյ

Ի՞նչ ընդհանրություն ունի մաթեմատիկան գրականության հետ:

Մաթեմատիկական լեզուն կարող է ճանապարհ գտնել հասկանալու նաև գրական երկը, գտնել այն գնահատելու ինչ-որ չափանիշներ, կատարելու նրա յուրօրինակ վերլուծություն: Եվ գրական երկի, թատրոնի, պարի կամ օպերային

ստեղծագործության նկատմամբ նման մոտեցումը հնարավոր է դառնում, առաջին հերթին, համաչափության գաղափարի ներգրավամբ:

Համաչափությունների ավանդական դասակարգումից բացի դրանք կարելի է բաժանել 2 խմբի[3]:

- Առաջին խումբը *երկրաչափական համաչափություններն* են, որոնք վերաբերում են առարկայի ձևին, կառուցվածքին, որոնք կարելի է անմիջականորեն տեսնել: Այստեղ համաչափությունները աչքի են ընկնում իրենց հստակությամբ:
- Երկրորդ խումբը *հանրահաշվական համաչափություններն* են, որոնք բնութագրում են բնության օրենքներն ու երևույթները: Սրանք արտահայտվում են երևույթների բովանդակային ընդհանրություններով, կապերով և նմանություններով:

<u>Հանրահաշվական համաչափություն և գրականություն</u>

Գրականության մեջ հանրահաշվական համաչափությունը շատ ակնառու է, հայտնաբերումը՝ հեշտ: Կարևոր է թեկուզ այն պատճառով, որ յուրաքանչյուր ոք պարտավորված է զգում հասու լինել, «հասկանալ» արվեստի գործը: Դեռևս Արիստոտելը համաչափությունը հասկանում էր որպես մի վիճակ, որը բնութագրում է ծայրահեղությունների հարաբերակցություն:

Հանրահաշվական համաչափությունը խորքային է: Հեղինակը դիպաշարով իրականացնում է իր գաղափարը, բերում է իր ասելիքը, ինչը շատ ավելին է, քան կատարված մեկ կամ մի քանի իրադարձության նկարագրություն:

Գրական ստեղծագործության գաղափարն իրագործելու համար հեղինակն ստեղծում է կերպարներ և զանազան համաչափություններ այդ կերպարների միջև: Այդ գործում մեծ դեր է խաղում բարոյահոգեբանական գործոնը: Այստեղ համաչափությունն ստեղծվում է կերպարների միասնության և հակադրության միջոցով: Միասնության համար հիմք են գեղեցիկի, բարու նկատմամբ զգացմունքների, մտածողության և շահերի ընդհանրությունը, հակադրության հիմքը՝ մարդկային զգացմունքների, մտածողության տարբերության շահերի բախումով: Միասնությունն արտահայտվում է համակրանքի, փոխադարձ սիրո, հարգանքի, մարդկանց միավորման ... սկզբունքներով, իսկ հակասությունն արտահայտվում է հակակրանքի, ատելության, բախումի, վրեժի, մարդկային արժանապատվության ոտնահարման, բացասական փոխհարաբերությունների ... միջոցով:

[3] Հայոց լեզու և գրականություն, 2012թ., թիվ 7, էջ 37

Գրական ստեղծագործության մեջ հերոսի հայելային արտացոլումն էլ պետք է լինի բացասական հերոսը կամ հակահերոսը: Դրականի ու բացասականի այս արտացոլմամբ ստացվող համաչափությունը լայնորեն դրսևորվում է մարդու կյանքում: Բարին և չարը, արդարն ու անարդարը, ճիշտն ու սխալը, գեղեցիկն ու տգեղը և նման այլ հակադրություններ կյանքի անբաժան ուղեկիցներն են և հանդես են գալիս իրար հետ զուգորդված:

Գրական երկերի կերպարային հիմքն են սիրող զույգերը, սիրային եռանկյունիները, հայրենասերները, բնությունը, կենդանիներին սիրողները ... :

<u>Երկրաչափական համաչափություն և գրականություն</u>

Երկրաչափական համաչափությունը գրական ստեղծագործության, հատկապես պոեզիայի կառուցման կարևոր սկզբունքներից է: Այն ստեղծագործությանը հաղորդում է կշռույթ, երաժշտականություն, ինչը համաչափության բերած գեղեցիկի արտահայտությունն է, և այն դարձնում է ընկալման համար հաճելի:

Ինչպե՞ս է արտահայտվում երկրաչափական համաչափությունը գրականության մեջ:

Գրականությունն ստեղծվում է բառով: Յուրաքանչյուր բառ ունի գեղագիտական արժեք, այն գեղեցիկ է կամ ոչ: Ո՞րն է բառի գեղեցկությունը: Բացատրությունը նախ և առաջ համաչափության մեջ է: Օրինակ՝ «բա-րի» բառը համաչափ է իր երկու վանկերի մեջտեղով անցնող ուղիղի նկատմամբ: «Ա-ռու» բառը ևս օժտված է համանման համաչափությամբ: Բայց այս երկու բառերի միջև կա տարբերություն: Առաջին բառի վանկերը բարեհունչ են, երկրորդ բառինը՝ ոչ: Ահա երկու հայտանիշներ՝ համաչափություն և բարեհնչունություն, որոնք որոշում են բառի գեղեցկությունը: Նշված օրինակներում գործում է համաչափությունը ուղիղի նկատմամբ, ինչն անցնում է բառի վանկերի միջով: «Ծով» բառում առկա է նույն համաչափությունը: Համաչափության առանցքն անցնում է «Օ» ձայնավորով: Համաչափություն ստեղծող «ծ» և «վ» հնչյունների մեջ կա բարեհնչունություն: Ուրեմն՝ այդ բառը ևս գեղեցիկ է: Իսկ «դող», «կող», «հող» բառերում հնչյունների մեջ բացակայում է բարեհնչունությունը:

Բառին բնորոշ է նաև սահող համաչափությունը: Եթե համամեմատենք «Հա-յաս-տան» և «Ար-մե-նի-ա» բառերը, կտեսնենք, որ երկուսում էլ գործում է սահող համաչափությունը, բայց բարեհնչունությունը ավելի ուժեղ է «Հայաստան»-ում: Այդ պատճառով գեղեցիկի տեսակետից ավելի նախընտրելի է: Հայաստանի հավաքականի մրցույթների ժամանակ վանկարկում են «Հա-յաս-տան», ոչ թե «Ար-

մե-նիա»: Բառից հետո հաջորդ տարրերը բառակապակցություններն են, արտահայտությունները, նախադասությունները:

Չափածո խոսքը ռիթմական (կշռույթային, չափաբերական) բնույթ ունի[4]: Պետք է հիշել, որ ռիթմը միայն չափածո խոսքին բնորոշ բան չէ. դա ընդհանրապես ժամանակի մեջ շարժման կամ գործողության որոշ հավասար միավորների պարբերական, համաչափ կրկնությունն է: Այն հատուկ է բնության և կյանքի շատ երևույթներին՝ սկսած արեգնակային համակարգի շարժումից, օրվա և գիշերվա հաջորդափոխությունից մինչև մարդու քայլվածքն ու սրտի բաբախյունը, ժամացույցի աշխատանքից մինչև շոգեքարշի անիվների պտույտը:

Արվեստի մեջ էլ որոշ տեսակներ հիմնվում են ռիթմական շարժման վրա: Ռիթմիկ են պարերը, որոնք առաջանում են մարմնի համաչափ շարժումներից: Գրականության մեջ ռիթմիկ են բոլոր չափածո երկերը: Որպեսզի պատկերացնենք, թե ինչպես է գոյանում չափածո ստեղծագործության ռիթմը, համեմատենք արձակ մի հատված և մեկ բանաստեղծություն:

Ահա «Միրհավ» պատմվածքից մի հատված:

«Աշուն էր, պայծառ աշուն. . .

Օդը մաքուր է, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասրենու թփերը:

Աշուն էր, տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը: Նույնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհվում էր քամու առաջ: Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն: Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը:

Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում: Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսվում էին իրար, պողպատի ձայն հանում: Կարծես ձիավորների էին արշավում իրար դեմ և սիմինդրի տերևը, որպես բեկված սուսեր, ընկնում էր քամու առաջ»:

Այս նկարագրությունը կառուցված է արձակ խոսքի սկզբունքներով: Ամեն մի պարբերություն ներկայացնում է բնության ընդհանուր պատկերի զարգացման մի աստիճան, բայց նրանք ոչ ծավալով, և ոչ էլ կառուցվածքով իրար նման և համաչափ չեն: Պարբերություններում նախադասությունների քանակը հավասար չէ, կան բարդ համադասական և ստորադասական նախադասություններ, տարբեր են բնույթով ու

[4] Ջրբաշյան Է., Գրականագիտություն, Երևան 1993, էջ 198

ծավալով: Այդ պատճառով էլ արձակ ստեղծագործության մեջ չկա և չի էլ կարող լինեն ռիթմ, հավասար միավորների պարբերական կրկնության իմաստով, այսինքն՝ համաչափություն;

Ո՛չ տրտունջ, ո՛չ մրմունջ սգավոր,
Հեռացի՛ր, մոռացի՛ր ինձ հավետ.
Իմ ուղին միշտ մթին, մենավոր,
Կըզնամ իմ դժկամ ցավի հետ:

Իմ ճամփան՝անվախճան մի գիշեր,
Ինձ շոյող ոչ մի շող չի ժպտա.—
Հեռացի՛ր, մոռացի՛ր, մի՛ հիշիր,
Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գթա…

Հուսաբեկ, մութ ու մեգ թող լինի,
Իմ վերև թող արև չըխնդա.
Լոկ երկունք, լոկ արցունք թող լինի,
Ինձ այդպես, քրոջ պես մի՛ գթա…

Վ. Տերյան «Հեռացումի խոսքեր»

❖ Ռիթմական հատկանիշն այն է, որ բոլոր 12 տողերն էլ ունեն հավասար վանկային երկարություն՝ կազմված են 9 վանկից, իսկ հավասար տողերի պարբերական կրկնությունը ոտանավորի ռիթմի հիմնական պայմանն է և այդ պատճառով էլ ամեն մի տողից հետո պետք է արտասանական որոշ դադար տրվի:

❖ Բայց միայն տողերի վանկային հավասարությամբ խնդիրը չի ավարտվում: Բանաստեղծության ներքին կառուցվածքը ուսումնասիրելով՝ նկատում ենք մի ուրիշ հատկանիշ ևս: Այն է՝ արտասանելիս բոլոր տողերը բաժանվում են ավելի փոքր ռիթմական միավորների , 9 վանկանի տողը ներքուստ կազմված է 3 մասից՝ 3-3-3 վանկերով: Տաղաչափության մեջ տողի ռիթմական բաժանման տեղերը կոչվում են հատածներ և նշվում են նշող գծիկով, իսկ այդ տեղերում պետք է փոքրիկ արտասանական դադարներ տրվեն:

Այս նույն սկզբունքով բաժանվում են նաև բանաստեղծության բոլոր մյուս տողերը: Այսպիսով՝ բանաստեղծության մեջ, բացի մեծ ռիթմական միավորներից, որ 11 վանկանի տողերն են, կան նաև փոքր միավորներ, որոնց պարբերական կրկնությունը շատ որոշիչ է ռիթմի համար: Տողերը իրար հետ կապված են կանոնավոր փոքր վանկային միավորներով:

❖ Բանաստեղծության ռիթմական նկարագրի ավելի մեծ միավորը 4 տողից բաղկացած խմբերն են, որոնք կազմում են բանաստեղծական տուն: Այս բանաստեղծության մեջ նման կազմով հանդես են գալիս 3 անգամ, և այդ համաչափ կրկնությունից ավելի է ընդգծվում խոսքի ռիթմական բնույթը:

❖ Բանաստեղծության մեջ երկրաչափական համաչափության ստեղծման հնարք է հանգավորումը, ինչը կապ է ստեղծում տողերի միջև: Բանաստեղծության ռիթմն ու հնչյունական ներդաշնակությունը ուժեղանում են տողերի համանման վերջավորությունների շնորհիվ, երաժշտական սահունություն ու ներդաշնակություն տալիս ոտանավորին, որով էլ այն ավելի ավարտուն, ամբողջական տպավորություն է թողնում:

Բանաստեղծության բոլոր տողերի վերջին բառերը՝ ըստ հանգային զույգերի՝ մենավոր – սգավոր, հավետ – հետ, գիշեր – հիշիր, ժպտա – գթա, լինի – լինի, չխնդա – գթա:

Առաջին տողը հանգավորվել է երրորդ տողի հետ, երկրորդը՝ չորրորդի: Այսպիսի հանգավորումը կոչվում է խաչաձև հանգավորում:

Ինչպես տեսնում ենք, ոտանավորի ռիթմը գոյանում է ոչ թե մեկ, այլ մի շարք տարրերի՝ բանաստեղծական տող և նրա մեջ մտնող ավելի փոքր միավորների (տուն, հանգ) համաչափ կրկնությունից:

Չափածո խոսքը միշտ չէ, որ հավասար ու համանման միավորներից է բաղկացած: Այսպիսի բանաստեղծություններն էլ անվանում են ազատ:

Գյուղի առավոտ ...
Կապույտ ու բարդի:
Թոնիրների մեջ հացն է արթնանում,
Ինչ-որ տեղ գառն է մայունով լալիս …
Ու խղճի հոտ է
Աշխարհից գալիս:

Վ. Դավթյան

«Ես իմ անուշ Հայաստանի ... » բանաստեղծության մեջ կա 24 մակդիր, որոնցից 12-ը դրական իմաստով, 12-ը՝ բացասական: Համաչափությունը լիովին պահպանված է:



Գրականության դասաժամերին առնչվում ենք նաև երկրաչափական մարմինների հետ՝ կապ ստեղծելով ուսուցանվող նյութի և պատկերի մեջ:

Հայոց այբուբենը հավասարակողմ եռանկյունաձև դասավորելու դեպքում 3 անկյուններում հայտնվում են Ա, Ս, Ք տառերը:



Ա – Աստված
Ս - Սուրբ հոգի
Ք – Քիստոս

Ա գլխատառից մինչև Ս-ն 7 տառ է, Ս-ից մինչև Ք-ն և Ք-ից Ա-ն դարձյալ 7 տառ: Նշված տառերն առանձնացնելուց հետո յուրաքանչյուր կողմում մնում է 6 տառ:

Վեցը, քրիստոնեական հավատալիքի համաձայն, աշխարհաստեղծման օրերի թիվն է: Աստված աշխարհը ստեղծեց 6 օրում, իսկ 7-րդ օրը հանգստացավ ու սրբագործեց այն:

Այբուբենը դասավորվում է նաև քառակուսու, շեղանկյան, ուղղանկյան տեսքով:

Այբուբենը դասավորվում է 3x12 սկզբունքով: 3-ը՝ դարձյալ նույն խորհրդանիշն է՝ Աստված, Սուրբ հոգի և Քրիստոս, իսկ 12-ը առաքյալների թիվն է: Մեջտեղից կարդացվում է ԽԱՉ, որը քրիստոնեական հավատի խորհրդանիշն է:

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Ժ	Ի	Լ
Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ	Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո
Չ	Պ	Ջ	Ռ	Ս	Վ	Տ	Ր	Ց	ՈՒ	Փ	Ք

Թվերը կիրառվել են գեղավեստական գրականության մեջ:

- Օխտն աղբյուրից ջուր է առել

Կույս սափորով լուռ ու մունջ:

- Ու քառսուն օր, քառսուն գիշեր

Կռիվ տվին անդադար:

- Հին աշխարհը ամեն օր

Հազար մարդ է մտնում նոր:

2.4 Գրականություն և արվեստ

Արվեստը մարդկային գործունեության այն ոլորտն է, որը ձգտում է բավարարել մարդու հոգևոր կարիքներից մեկը, այն է՝ սերը դեպի գեղեցիկը:

Արվեստը կրթում, լուսավորում, հնարավոր է դարձնում աշխարհը ճանաչել բառերով, ձայնով, գույնով իր պատկերավոր արտահայտման միջոցով: Արվեստի ազդեցությունը մեծ է մարդկանց վրա:

Գրականությունը կոչվում է բառերի արվեստ, արվեստների մայր, քանի որ բառի միջոցով բացահայտում է աշխարհի գեղեցկությունը, փոխանցում զգացմունքներ, մտքեր, արտացոլում իրականությունը շարժման և զարգացման մեջ:

Գրականությունը, որպես բառերի արվեստ, ունի մարդկանց մտքերի և սրտերի վրա ազդելու զարմանալի ունակություն, օգնում է բացահայտել մարդկային հոգու իսկական գեղեցկությունը: Այն հիմք է ծառայում արվեստի տարածական, ժամանակային և համադրական տեսակների զարգացման համար:

Գեղարվեստական գրականության մեջ մեծ է գույնի և լույսի ընկալումը: Պ. Դուրյանը, Մ. Մեծարենցը, Վ. Տերյանն ու Ե. Չարենցը իրենց պոեզիայով հաստատեցին, որ չկա ոչ մի սահման պոեզիայի և գեղանկարչության միջև: Նրանք ստեղծեցին գեղագիտական համակարգ, որի անբաժան տարրերն էին գույնը, լույսը, երանգը, տարածությունն ու խորությունը:

«Աքասիաներուն շուքին տակ» բանաստեղծությունը ուսուցանելիս ուսուցիչը ներկայացնում է, որ այն լույսերով և գույներով լի մի շքեղ բնապատկեր է: Ամեն ինչ լույսի մեջ է և պայմանավորված է լույսով: Նուրբ ջրաներկային երանգներով արված այս բնանկարի մեջ երևում է ծաղկած ծառի շարժումը իրիկվա հովի մեջ:

Ծաղիկներեն հուշիկ թերթեր կը թափե

Բուրումներով օծուն հովիկն իրիկվան,

Հոգիներուն կիջնե երազ մը բուրյան,

Ինչ հեշտին է մթնշաղն այս սատափե:

Լույսն իր գույների մեջ և ոսկի է, և արծաթ, և կարմիր է, և կապույտ է, և կանաչ է, և դեղին:

Լույսը կյանքի համարժեք ուժ է դառնում «Սիրերգ» բանաստեղծության մեջ, որը կյանքի տոնն է հավերժության մեջ: Լույս և լուսեղեն ճամփա գիշերվա մեջ,

ինչպես կյանք և ապրելու հույս մոտեցող մահվան կողքին: Սիրերգը եղերերգ է բերում, հոգու տոնն ու կիրակին մարում են ցնծագին գիշերվա մեջ, բայց ամեն ինչ լույս է, որովհետև սիրո ու կյանքի մեջ է:

Ուսուցիչը ներկայացնում է բանաստեղծի հոգեկան ապրումների փակ աշխարհը բացող գույների մասին:

Կապույտը, որ երկնքի գույնն է, նաև երազկոտ հոգիների վրա է կամար կապում, «հեշտություն» է բերում, բնությունը ձուլվում է կապույտին, և ծնվում է այսպիսի պատկեր. «Լուռ քերթված մը կապույտի կ'երգե ցայգը լուսավոր»: *Ոսկեգույնն ու կարմիրը* արևի ցոլանքն են բերում և կյանքի հզոր ուժը. դա ապրելու տոնն է և հոգու ցնծությունը: «Պիտի ըմպեմ բոցն արևին, ճառագայթի եմ ծարավի»: *Արծաթագույնն ու ճերմակը* թանձրացական լույսն են, որոնք արտացոլվում են այսպիսի պատկերներում՝ «ճերմակ երազ», «արծաթ շողեր», «սատափ մթնշաղ», «լույսի արծաթ անձրև» ... *Սևը* կյանքի տագնապն ու հոգու ցավն է գունավորում՝ «Սրտիս մեջ սև պար մը կա», «Եվ ես կ'ըմպեմ սև հեշտանքը ցավոտ Կյանքին»: Սևի շարունակությունն են մութը, ստվերը: *Դեղինը*՝ դեղին վարդի գոյությամբ, խորհրդանիշն է «առանձնացած հոգիներու»: Մեծարենցը բերում է նաև ծովի գույներ և բնության «թուրինջ, գույներ, ջրանկար»:

Գունային նշաններն առավել հստակ իմաստային կիրառություն ունեն «Ծիածան» գրքում: Իր ներքին հոգեկան ապրումները Չարենցը կերպավորել է ծիածանի 3 հիմնական գույներով՝ *կապույտ, ոսկի, մանուշակագույն*:

Կապույտը հոգու աղոթք է, թախիծ, կարոտ, աչքերի առավոտ, արցունք, մաքուր հոգի: *Ոսկին* հույսի բռնկումն է: Այն բռնկվում է արևի մեջ, այնպես էլ մարում է՝ շուրջը տարածելով *մանուշակագույն* մշուշ:

Չարենցի գունային պատկերներից են՝ կարմրածուփ կեսօր, կարմիր կրքեր, ոսկի տեսիլ, կապույտ մորմոք, կանաչ աչքեր, հուր կրակ, կարմիր տենդ և այլն:

Բառային նկարչության բակունցյան արվեստն ուսումնասիրելիս ուսուցչի հանձնարարությամբ աշակերտները դուրս են գրում գունավոր մակդիրներ՝ սպիտակ ձի, կապույտ ձի, սև քարափ, նարնջագույն ամպեր, ոսկեթև աղավնիներ, և նկարազարդում՝ հարստացնելով իրենց երևակայությունը և գեղագիտական ճաշակը:

Աշակերտների մոտ հոգու և մտքի, զգացողության կապ է ստեղծվում գրականության գրեթե բոլոր դասաժամերին:

Հ. Սահյանի «Ծովն էր, գիշերն էր ...» բանաաստեղծությունը ուսուցանելիս ուսուցիչը ցուցադրում է Այվազովսկու «Ծովը փոթորկի պահին» և Գ.

Բաշինջաղյանի «Սևանը գիշերով» նկարները: Անդրադառնում է բնության և մարդու հոգեբանության բացահայտմանը, հակադրում կամ համադրում քարերի սիմֆոնիան և ծովի հանդարտությունը: Էկրանին ծովի գիշերային պատկեր է: Ապա լսում են Վիվալդիի «Տարվա եղանակները» կամ Հ. Մանասերյանի՝ Սևանին նվիրված մեղեդիները: Բանաստեղծությունն ընթերցելուց հետո աշակերտները, թվում է, լսում են ծովի մեղմ ծփանքը, երկու մտերիմ հոգիների զրույցը, օրորվում երկնային ու երկրային ծովերի մեջ, տեսնում գաղտնիքներով ծովն ու երկնքում առկայծող աստղերը:

Ե. Չարենցի «Տաղարան» շարքը ուսուցանելիս դասաժամերը անպայման շնչում են Սայաթ-Նովայի, Տ. Մանսուրյանի «Էլի գարուն կգա», Պասկևիչյանի «Ամեն տեսակ երգ երգեցի», Ա. Սաթյանի «Ես իմ անուշ Հայաստանի ...» երգերով:

Գեղեցիկի աշխարհը թափանցելու կարևոր ու անփոխարինելի միջոցներից մեկն էլ ***երգն ու երաժշտությունն*** են: Նրանք հաճախ կարող են օգտագործվել գրականության դասաժամերին, դառնալ այդ դասաժամերի բաղադրիչներից մեկը՝ դասերը դարձնելով հաճելի, գեղեցիկ և տպավորիչ:

Նկար և նկարչության, երգի և երաժշտության, օգտագործումից բացի կարևոր է նաև այլ միջառարկայական կապերի օգտագործումը գրականության դասաժամերին: Այդպիսիներից են՝ *խոսքարվեստը, թատերական արվեստի տարրերը, ճարտարապետության և քանդակագործության տարրերը, բնագիտությունը, աշխարհագրությունը, տեխնիկան, կինոն* և այլն:

Թատերական արվեստի ամենապարզ և ամենամատչելի տեսակը դերերով կարդալն է: Սովորած նյութը դերերով արտասանելը, կարդալը, ցանկալի արդյունք կտա: Ամփոփման ժամանակ կազմակերպված բեմականացումը ավելի տպավորիչ կդարձնի դասը և կօգնի հասկանալու թատերական արվեստը, մարդկանց ապրումները, հույզերն ու մտորումները արտահայտելու մեծ հնարավորություն կտա:

Հատվածի դերաբաշխային ընթերցանություն է կատարվում Վ. Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է», Գ. Սունդուկյանի «Պեպո», Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ», Լ. Շանթի «Հին աստվածներ» ... ստեղծագործություններն ուսումնասիրելիս:

Կարևոր է ***ֆիլմերի*** դաստիարակչական և ճանաչողական դերը աշակերտի կյանքում, աշխարհաճանաչողության զարգացման ընթացքում:

«Արտիստը», «Մենք ենք մեր սարերը», «Ջրհորի մոտ», «Պեպո», «Աշնան արև» ... ֆիլմերի դիտումից հետո կատարվում է քննարկում. աշակերտները ճանաչում են հայ մեծանուն դերասաններին, հմայվում նրանց անզուգական խաղով,

սովորում թևավոր խոսքեր, ծանոթանում մարդկանց բարքերին, ավանդույթներին ու ժամանակաշրջանին:

Գրականության դասաժամերին ուսուցիչը բացատրում է մեր քարակերտ երկրի հրաշալիքների գեղեցկության գաղտնիքների մասին: Հետաքրքրական և զարգացողական զրույցներ է անցկացնում մեր ***հուշարձանների, բանդակների*** ու ***խաչքարերի*** մասին:

Հ. Սահյանի «Ուր որ նայում եմ» բանաստեղծությունը ուսուցանելիս ուսուցիչը բացատրում է, որ բանաստեղծը քարը դարձրել է բնապատկերի հիմք: Հայը պաշտում է քարը, և նուրբ են նրա զգացմունքները: Հայի քարեղեն աղոթքը խաչ է դարձել և խաչի հանված Հայաստանը՝ «դու յոթնապատիկ խոցված Տիրամայր» (Վ. Տերյան) ապավինել է քարին և ապրել նրա նման անկոտրում՝ քարե ամպրոպ ու քարե ծիածան և դեռ ելնում է «քարերն ի վեր»: Հայաստան աշխարհը ներկայանում է Զորաց քարերի տեսքով: Ավերել են Հայաստանը, և քարից արցունք է հոսել, բողոքել է հայը, և հնչել են հաղթանակի շեփոր և թմբուկ, քարը պահել է հային, դարձել է լծկան ու մաճ, ու հաց է քամել քարից քարերից ամուր հայորդին:

«Քարե երթ», «քարե կարոտ», «քարե հրճվանք» ... «Քար» բառը բանաստեղծության մեջ օգտագործվել է 34 անգամ՝ ստանալով 31 մակդիր: Աշակերտները հասկանում են, որ Հայաստանը ներկայացված է և՝ հոգևոր, և՝ ֆիզիկական, և՝ շոշափելի, և՝ երևակայական ծիրի մեջ: Քարե սարսուռի մեջ տեսնում ենք քանդակագործին և բանաստեղծին, մաճկալին և հոգևորականին, քաջ զինվորին, որ արծվի ճախր ունի և վագրի թռիչք[5]:

«Սասունցի Դավիթ» էպոսն ուսումնասիրելիս աշակերտը ճանաչում է գիրքը նկարազարդող Հ. Կոջոյանին, քանդակագործ Ե. Քոչարին, իսկ Մ. Մաշտոցի կյանքն ու գործունեությունն էլ ուսումնասիրելիս ճանաչում է դիմանկարի հեղինակ Ստ. Ներսիսյանին, քանդակագործ Ղ. Չուբարյանին: ...

2.5 Գրականություն և բնագիտություն

Հայ գյուղացին իր հոգսաշատ առօրյան, ցավն ու ծանր լուծը կիսել է հարազատ որևէ կենդանու հետ: Լուծը քաշողը ձին էր, վար ու ցանքի ժամանակ՝ եզը, որին պատահական չէ, որ «Եզո՛ ջան, ախպե՛ր ջան» էին ասում: Հերոսի համար կենդանին դառնում էր եղբայր ու ընկեր, որի նկատմամբ հեղինակն էլ իր ջերմ

[5] Թովմասյան Թ., Աբազյան Ս., Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան 2019, էջ 167

հույզերն ու սերն էր արտահայտում: Սիմոնը սիրում էր Ցոլակին, Մահարին՝ Չալոյին, ով բնութագրվում է «չքնաղ», «պայծառ» մակդիրներով: Չալոն դառնում է բանաստեղծի մանկության տարիների առաջին սերը, որն ամբողջ կյանքում այդպես էլ չի մարում նրա հոգում:

Ուսուցիչը ներկայացնում է կենդանագրության այլ օրինակներ ևս՝ շանը նվիրված Եսենինի բանաստեղծությունները, Հ. Թումանյանի «Գելը», Ստ. Զորյանի «Ճովանը», Հ. Մաթևոսյանի «Կանաչ դաշտը», «Ալխոն», Վ. Անանյանի պատմվածքները, Ավ. Իսահակյանի «Եղնիկը» և այլոց պատմվածքները:

Հայ գրականությունը հարուստ է այնպիսի ստեղծագործություններով, որոնցում զուգակցվում են բնությունն ու անձնական ապրումները, միավորվում են բնաշխարհն ու հոգու ապրումները: Հայոց աշխարհի քարափները և հպարտ լեռները, ալպիական ծաղիկներն ու զմրուխտյա դաշտերը, հուր-հրեղեն թիթեռներն ու լույս-փերուզ լճակները, ուշաթափվող առուներն ու ծաղկաթերթերի մեջ քնած բզեզը, պիրկ արմատներով իր հողը գրկած հայը՝ մասրենին, իրար հետ զրուցող եղևնին ու սոճին, արցունքի նման ջինջ օդը, անուշաբույր ուրցն ու դաղձը ... անքատելի կապ են ստեղծում բնության և ընթերցողի միջև:

Այսինքն՝ գրականության դասաժամերին միջառարկայական կապ է ստեղծվում նաև բնագիտության հետ: Աշակերտները ծանոթանում են բնության գաղտնիքներին, երևույթներին, կենդանիների բնավորության «լավ» ու «վատ» հատկանիշներին:

2.6 Գրականություն և աշխարհագրություն

Աշխարհագրության հետ միջառարկայական կապ ստեղծվում է հեղինակի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրելիս, ինչպես նաև ստեղծագործությունների միջոցով:

«Սյունյաց պատմական ձորերում հոսող Որոտանի եզերքին է ծնվել տաղանդավոր մի բանաստեղծ, որին վիճակված է երջանիկ ապագա»:

Ստեփան Զորյան

Լոռու ձորը, ձորում «վա՛շ-վի՛շ» անող Դեբեդի ու Լորագետի զրույցը, Սահյանի քարափները, Մաթևոսյանի հայրենի Ծմակուտը, Մահարու Վանն ու Չարենցի Կարսը, Շիրազի Գյումրին ու Իսահակյանի Ղարաքիլիսան, Սարոյանի Կալիֆորնիան ու Սայաթ-Նովայի Թիֆիսը, Արևմտյան Հայաստանը, Սփյուռքն ու

աշխարհագրական ցանկացած տարածք իր բարբառով, նիստ ու կացով աշակերտին սրտամոտ է դառնում գրականության դասաժամերին, քանի որ տեղեկություն է ստանում տվյալ աշխարհագրական բնակավայրի մասին:

2.7 Գրականություն և ժամանակակից տեխնոլոգիաներ

Գրեթե բոլոր աշակերտները կարողանում են օգտվել համակարգչից, ժամանակակից տեխնոլոգիաներից: Ուսուցման ընթացքում անհրաժեշտ տեղեկությունները, նյութերը ձեռք են բերում համացանցից, օգտվում են համակարգչից, տարբեր կայքերից, պատրաստում սահիկաշարեր:

Եզրակացություն

Թեման ուսումնասիրելուց հետո հանգում եմ այն եզրակացության, որ արդի ժամանակաշրջանում ուսուցման և դաստիարակության կարևոր խնդիրներից է դրանց արդյունավետության բարձրացումը, որի լուծման կարևոր միջոցներից մեկը միջառարկայական կապերի խելամիտ իրականացումն է: Միջառարկայական կապերը մեծ դեր ունեն աշակերտի համոզմունքների ձևավորման գործում:

Հայոց լեզվի և գրականության դասաժամերը պետք է լինեն բազմաբնույթ, հագեցած, հարուստ և բազմաբովանդակ: Ուսուցիչը պետք է լավ պատրաստված լինի՝ տիրապետելով ժամանակակից տեխնոլոգիաների:

Ցավոք սրտի այսօր մեր աշակերտները չեն կարդում կամ կարդում են ստիպողաբար: Մանկավարժները պետք է անեն ամեն ինչ նոր սերնդի մեջ ընթերցողական կարողությունների մշակման, ընթերցասիրության դաստիարակության համար, քանի որ սահուն և վարժ, հասկանալի խոսքը կարևոր է բոլոր ոլորտները թափանցելու համար:

- ❖ Միջառարկայական կապերի միջոցով կատարվում է մտքերի և մեթոդների ինտեգրացում: Նրանց շնորհիվ ուսուցումը պետք է հասնի իր նպատակին:
- ❖ Նրանց օգնությամբ ձևավորվում են այնպիսի որակական հատկանիշներ, ինչպես գիտելիքների համակարգվածությունն է, ըմբռնումը, ճկունությունը, գիտելիքների ընկալման խորությունը:
- ❖ Միջառարկայական կապերը զարգացնում են աշակերտի ստեղծագործական մտածողությունը, աշխարհաճանաչողությունը, աշխարհայացքը:
- ❖ Չպետք է լինի ինքնանպատակ, քանի որ օգնում է աշակերտի համակողմանի դաստիարակությանը:
- ❖ Պարտադիր է բոլոր ուսուցիչների համար, քանի որ ամբողջացնում է ուսումնական նյութը, դասավանդման մեթոդները, ձևերը:

Այսպիսով, քանի որ բնության մեջ չկան բացարձակ իմաստով առանձնացված առարկաներ, երևույթներ, ուստի ուսուցման ընթացքում այդ երևույթի միակողմանի ուսումնասիրությունը չի կարող լրիվ պատկերացում տալ:

Ճանաչողական-իմացական գործընթացի լիարժեքությունը ենթադրում է կարողությունների և համապատասպան համակարգված գիտելիքների միավորում:

Օգտագործված գրականության ցանկ

- Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Երևան 2016
- Հայոց լեզու և գրականություն, 2005թ., թիվ 3-4
- Հայոց լեզու և գրականություն, 2012թ., թիվ 7
- Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները. ձեռնարկ ուսուցիչների համար, «Այրեքս» 2004թ.
- Ուսուցման ինտերակտիվ մեթոդների տեսությունն ու պրակտիկան (մեթոդական ձեռնարկ) Եր. 2004թ.
- Թովմասյան Թ., Աբազյան Ս., Մեթոդական ձեռնարկ ուսուցիչների համար, Երևան 2019
- Ջրբաշյան Է., Գրականագիտություն, Երևան 1993
- https://tert.nla.am